

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԷՍՔՐՈՒ ՀԱՇՒՎՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ

Հաճախորդ	Էսքրոու հաշվետեր - 14 տարին լրացած ֆիզիկական անձ ¹ Շահառու- ֆիզիկական կամ իրավաբանական անձ, անհատ ձեռներեց
Հաշվի բացման նպատակ	Անշարժ գույքի կամ տրանսպորտային միջոցների (այսուհետ՝ Գույք) ձեռքբերման գումարի կամ դրա մի մասի մուտքագրում հաշվին՝ որպես գործարքի կատարման երաշխիք:
Արժույթը	Պայմանավորված է գործարքի արժույթով ²
Հաշվով գործարքների նվազագույն չափ	Չի սահմանվում
Հաշվով գործարքների առավելագույն չափ	Պայմանավորված է գործարքի պահանջներով
Բանկային հաշվի բացում և սպասարկման միանվագ միջնորդավճար ³	Էսքրոու գործարքի գումարի 0.15%, նվազագույնը՝ 20,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 500.000 ՀՀ դրամ
Հաշվի ժամկետ	Ժամկետը պայմանավորված է Էսքրոու գործարքի ժամկետով
Էսքրոու պայմանագրում պայմանների փոփոխություն	10,000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր լրացուցիչ համաձայնագիր կնքելու համար
Հաշվի փակում	Սակագին չի կիրառվում՝ փակվում է Բանկի կողմից Էսքրոու Պայմանագրի ավարտից հետո
Հաշվի օրական մնացորդի նկատմամբ կիրառվող տարեկան (այսպես) տոկոսադրույք	0%
Հաշվով կատարվող գործառնությունների սակագները (ներառյալ գումարի մուտքագրում ⁴ , ելքագրում, փոխանցում և այլն)	Համաձայն Բանկում գործող «Ֆիզիկական անձանց ընթացիկ հաշիվների բացման և սպասարկման պայմանների և սակագների»

¹ 14-ից 18 տարեկան ֆիզ. անձի դիմելու դեպքում անհրաժեշտ է նաև ծնողների կամ հոգաբարձուի համաձայնությունը

² ՀՀ դրամ և Բանկի կողմից ընդունելի այլ արժույթներով Ձեռք բերվող Գույքի դիմաց վճարումն իրականացվում է բացառապես ՀՀ դրամով: Այլ արժույթներով Գույքի դիմաց վճարումն իրականացվում է միայն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Այն դեպքում, երբ որպես գործարքի ապահովման միջոց մուտք է արվել արտարժույթ, ապա Էսքրոու պայմանագրով նախատեսված փաստաթղթերի ներկայացման դեպքում Շահառուին գումարը փոխանցելիս իրականացվում է արտարժույթի փոխարկում՝ տվյալ պահին Բանկի կողմից հրապարակված փոխարժեքներով:

³ Էսքրոու հաշվի բացումը և սպասարկումը ներառում է՝

- ✓ ✓Էսքրոու գործարքի կողմերի համաձայնությամբ Բանկում Էսքրոու գործարքի համար հաշվի բացում,
- ✓ Էսքրոու հաշվին գործարքի միջոցների դեպոնացում,
- ✓ Էսքրոու հաշվի բացման պայմանագրի ձևավորում,
- ✓ Էսքրոու հաշվի բացման պայմանագրի համաձայն Էսքրոու հաշվից Շահառուին միջոցների փոխանցման համար հիմք հանդիսացող փաստաթղթի ներկայացում Բանկին,
- ✓ Էսքրոու հաշվից Շահառուին միջոցների փոխանցում կամ վերադարձ հաշվետիրոջը՝ Էսքրոու գործարքի պայմանների կատարման կամ չկատարման դեպքում (Էսքրոու հաշվի բացման պայմանագրի համաձայն):

Միջնորդավճարը գանձվում է Էսքրո հաշվի բացման ժամանակ կանխիկ կամ անկանխիկ հաճախորդի այլ հաշիվներից և ենթակա չէ վերադարձման, եթե Էսքրոու հաշվով գործարքի կողմերը հրաժարվում են գործարքից:

Ծանոթություն

1. Բանկի կողմից բացվող Էսքրոու հաշիվը մեկանգամյա գործարքի (այսուհետ՝ Գործարք) կատարման համար նախատեսված հատուկ բանկային հաշիվ է, որի վրա դեպոնացվում են անշարժ գույքի և տրանսպորտային միջոցների առքուվաճառքի դիմաց հաշվետիրոջ կողմից Շահառուին վճարման ենթակա միջոցները՝ որպես Գործարքի կատարման երաշխիք:
2. Բանկը Էսքրոու հաշվից միջոցները անկանխիկ վճարում է Շահառուին միայն Էսքրոու հաշվի բացման պայմանագրով պահանջվող փաստաթղթերը Բանկ ներկայացման դեպքում:
3. Բանկը Էսքրոու հաշվից միջոցները անկանխիկ վերադարձնում է հաշվետիրոջը Էսքրոու հաշվի բացման պայմանագրով սահմանված դեպքերում և կարգով:
4. Էսքրոու հաշիվների բացման, վարման և սպասարկման վերաբերյալ կողմերի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Բանկի և հաշվետիրոջ միջև կնքվող Էսքրոու հաշվի բացման պայմանագրով:
5. Բանկը **երաշխավորում է**.
 - ✓ Էսքրոու հաշվին միջոցների դեպոնացումը,
 - ✓ Էսքրոու հաշվից միջոցների ժամանակին վճարումը շահառուին՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման փաստաթղթային հիմնավորման (ներկայացման) դեպքում:
6. Էսքրոու հաշիվները չեն կարող գրավադրվել, արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել հաճախորդի պարտավորությունների դիմաց բացառությամբ, եթե
 - ✓ կապված են ՀՀ օրենսդրությամբ, նորմատիվ իրավական ակտերով, Պայմանագրով և Կարգով նախատեսված ուղղություններից, դեպքերից, պայմաններից կամ գործառնություններից բխող պարտավորությունների հետ, կամ
 - ✓ այդ միջոցները Էսքրոու հաշվում եղած դրամական միջոցներն օգտագործելու համար Բանկի կողմից հաճախորդին վճարված տոկոսներից ձևավորված միջոցներ են, կամ
 - ✓ այդ միջոցները ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 5-րդ կետով նախատեսված գույք են, կամ
 - ✓ լրացել է Պայմանագրով սահմանված ժամկետը:
7. Հաճախորդի հաշվից միջոցների դուրսգրումը/փոխանցումը Շահառուին կատարվում է համապատասխան փաստաթղթերը Բանկ ներկայացնելուց հետո մինչև 3 աշխատանքային օրվա ընթացքում:
8. **Էսքրոու հաշվի միջոցները երաշխավորվում են Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին ՀՀ օրենքի համաձայն:**

Ծառայության վերաբերյալ ամբողջական տվյալներին կարող եք ծանոթանալ www.fastbank.am կայքում, ինչպես նաև զանգահարելով միասնական տեղեկատվական ծառայություն՝ (+37410) 510000 հեռախոսահամարով:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՄԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ